**ՏԵՂԵԿԱՆՔ**

**Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ**

**Իրավական ակտի նախագծի անվանում**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում**

Էկոնոմիկայի նախարարություն

**Իրավական ակտի տեսակ**

Կարգ

**Ոլորտ**

Գյուղատնտեսություն, Էկոնոմիկա

**Հանրային քննարկման ժամկետ**

30/11/2023 - 15/12/2023

**Ստացված առաջարկների արդյունքներ**

Ստացվել է 2 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 2 առաջարկ

**Քվեարկության արդյունքներ**

5 կողմ

13 դեմ

**Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից**

**18/12/2023**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| h/h | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Թաթուլ Ստեփանյան<br>01.12.2023 10:04:03 | <<Հիվանդության կասկածանքով կենդանիներ հայտնաբերելու դեպքում՝ կենդանիները մեկուսացվում են և իրականացվում է կլինիկական հետազոտություն անասնաբույժի կողմից, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ տեսուչի ցուցումով և հանձնարարությամբ>>: Այս պահանջի կատարման համար << ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ>> բաժնում չեք անդրադարձել: | Հարգելի պարոն Ստեփանյան, Ձեր կողմից արված առաջարկությունը ընդունվել է: | 2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 6. Գյուղատնտեսական կենդանիների շուկաները պետք է ապահովված լինեն՝ 1) կենդանիների բեռնման և բեռնաթափման հարթակով, 2) առանձին դարպասներով՝ շուկայից կենդանիների մուտքի և ելքի համար, 3) ապահովված լինեն լվացող, ցողարկող և ախտահանող սարքերով, 4) կոյուղատար առվակներով կամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | խողովակաշարերով, 5) կառուցված կենցաղային հարմարություններով (էլեկտրա- և ջրամատակարարում), 6) փոխադրամիջոցների անիվների ախտահանման համապատասխան հարմարություններով, 7) սանիտարական հանգույցով, վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով: 7. Գյուղատնտեսական կենդանիների շուկայի տարածքը պետք է լինի ցանկապատված՝ առնվազն 1,5 մետր բարձրությամբ, այցելուների և տրանսպորտային միջոցների համար նախատեսված առանձին մուտքերով: 8. Կենդանիների համար պետք է նախատեսված լինեն կացատեղեր՝ ճաղազատված տարածքներով, ցանցավոր հատակով: 9. Շուկայի տարածքը պետք լինի հարմարավետ ջրահեռացման, մեխանիկական մաքրման, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | լվացման և ախտահանման աշխատանքներ իրականացնելու համար: 10. Շուկան պետք է ունենա՝ 1) կենդանիների կենսական պահանջներն ապահովող միջոցներ՝ ջրախմոցներ, կերամաններ, ինչպես նաև զոոհիգենիկ պահանջներն ապահովող՝ գոմաղբի հավաքման և հեռացման հարմարանքներ, 2) ծածկ՝ տեղումներից և արևի ճառագայթներից կենդանիներին պաշտպանելու համար, 3) վարչական շինություն և անասնաբույժի սենյակ, պահեստային տարածք՝ սարքավորումներ, ախտահանիչներ, կեր պահելու համար: 11. Առևտրային օրվա ընթացքում չվաճառված կենդանիները գիշերակացը կարող են անցկացնել շուկայում: 12. Շուկայում մատուցված ծառայությունները վճարվում են կենդանիներ վաճառողի կողմից՝ համաձայն շուկայի գործունեությունը կազմակերպող սուբյեկտի կողմից սահմանված վճարի: 13. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Շուկայում թույլատրվում է վաճառել կեր, կենդանիների խնամքի համար նախատեսված պարագաներ և ձիաքարշ կցորդներ: 14. Շուկայի գործունեությունը կազմակերպող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պարտավոր է ունենալ անասնաբույժ՝ վաճառքի ենթակա գյուղատնտեսական կենդանիներին պարտադիր անասնաբուժական զննում իրականացնելու համար: 15. Շուկայում արգելվում է՝ 15.1 վաճառել հիվանդ կամ հիվանդության կասկածանքով կենդանիներ: 15.2 գյուղատնտեսական սննդամթերքի և արդյունաբերական ապրանքների վաճառքը: 16. Շուկայի տարածքը կարող է ապահովված լինել տեսահսկման համակարգով: |
| 2 | Թաթուլ Ստեփանյան<br>01.12.2023 10:02:20 | Առաջարկում եմ շուկայի տարածքում կենդանիների բարեկեցությանը վերաբերող բաժին ևս ավելացնել: | Հարգելի պարոն Ստեփանյան, նախագծում ներկայացված դրույթները ապահովում են շուկայում վաճառվող կենդանիների բարեկեցությունը: | |